№ 132 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆԻՍԻ 21

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆԻՍԻ 21 № 13

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

22, 23, 24, 25, 26, 27, 29 և 30-ին յունիսի

Պ. Ա. ԴՈՐՕԺՆՕՎ

Սօլօլակսկայա փող. տ. Գուրգէնօվի, տէլէֆօն № 583.

Իւրաքանչիւր տարի, սովորական կարգով

ՍԵԶՕՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

ԳՆԵՐԻ ԲԱՒԱԿԱՆԱՉԱՓ ԷԺԱՆԱՑՈՒՄՆ

ՄԻԱՅՆ 8 ՕՐՈՎ

Ի նկատի ունենալով, որ շուտով սեզօնը վերջանալու վրա է, և որպէսզի մինչև առաջիկայ տարի սեզօնի ապրանքներ չը մնան, վերև յիշված օրերի ընթացքում սեզօնի բոլոր ապրանքները կը վաճառվեն շատ էժան գներով։

ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՒՆԱՒՈՐ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ

Տեղի կունենայ վաճառքը միանգամայն էժան գներով

ՄԻԱՅՆ ՄԻՆՉԵՒ ՅՈՒԼԻՍԻ 1-Ը

ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱՐԱՏՕՎԻ ՍԱՐՊԻՆԿԱՅԻ

Ձեռագործ, առաջարկվում է այպէս ամուր, բարակ, միանգամայն չքեղ և լուանալու ժամանակ գոյնը չը կորցնող կտոր։

Վաճառքի է հանվում էժան գներով

Միայն մինչև յուլիսի 1-ը։

Սարատօվի սարպինկա, ռուսական ժանուածքից, արշինը 9 կ. սկսած։ Անգլիական սարպինկա, բարակ ժանուածքից, արշինը $12^1/_2$ կ. սկսած։ Մետաքսանման սարպինկա, գեղեցիկ գործուածք, որը կարող է փոխարինել արտասահմանեան Թանգագին գործուածքներին, արշինը $18^1/_2$ կ. սկսած։

Մեծաքանակ և բազմատեսակ բրդէ և մահուդէ ապրանք

Սեզօնի նորութիւններ, որոնք չեն վաճառվել սեզօնի ընթացքում։

Կը վաճառվեն խոշոր զեղչով

Միայն մինչև յուլիսի 1-ը։

Պատրաստի սպիտակեղէնի յատուկ բաժանմունքում

Խոշոր զեղչով կը վաճառվեն՝

Գունաւոր գուլպաներ—ձեռագործ, ասեղնագործ, նշանաւոր իրանց ամրութեամբ։

Գունաւոր զարդիտուրաներ, կանանց շալիկներ, վարտիկներ եւ բլուզկաներ էժանացված գներով։

Միայն մինչեւ յուլիսի 1-ը։

Խանութի վիտրինաներում ի ցոյց են դրված մեծ քանակութեամբ զանազան տեսակ ապրանքների կտորներ՝ իրանց վրա նշանակված էժան գներով։

555. 1—1 Պ. ԴՈՐՕԺՆՕՎ

Մանուֆակտուրային առևտուր ունեցող պ. պ. վաճառականների ուշադրութեան։

ԹԻՖԼԻՍՈՒՄ (Մանթաշեան շարքեր) ԲԱՑՎԱԾ Է

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

Ե. Ի. ԵՒ Կ. ԽԱԼԱԹԵԱՆՆԵՐԻ,

ուր բոլոր մանուֆակտուրավաճառները շատ ձեռնտու պայմաններով և գներով կարող են ձեռք բերել ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ։ Թիֆլիսի յիշեալ բաժանմունքը ունի մեծ քանակութեամբ զանազան տեսակի ապրանքներ։

Պատուէրները կատարվում են ճիշտ և ժամանակին։

(առ.) 562. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Պատիւ ունի յայտնելու, որ կիրակի, յունիսի 21-ին, առաւօտեան ժամը 11-ին Բօրսայի շինութեան մէջ նշանակված է Ընկերութեան անդամների

Տարեկան Ընդհանուր Ժողով

Զբաղմունքի առարկաներն են՝

1) Վարչութեան զեկուցումը իր գործունէութեան մասին.
2) Վերաստուգիչ յանձնաժողովի հաշիւը Ընկերութեան միջոցների մասին.
3) Ընտրութիւններ Վարչութեան և Վերաստուգիչ յանձնաժողովի անդամների։
4) 1908 թ. հաշւի և 1909 թ. Նախահաշւի հաստատութիւնը.
5) Ընթացիկ գործեր։

Ներկայ ժողովը, համաձայն կանոնադրութեան § 36-ի, կը համարվի կայացած՝ որքան անդամ էլ ներկայ լինի։

(շ.կ.) (առ.) 571. 2—2

ԷՍՍԵՆՏՈՒԿԻ ✦ ՊԵՍՏԻԳՕՐՍԿ ✦ ԿԻՍԼՕՎՕԴՍԿ

ԲԺԻՇԿ

ԱՐԱՄ ՄԿՐՏՉԵԱՆՑ

Մօսկվայի Կայսերական Համալս. կանանց հիւ. կլինիկայի ասիստենտ։

Կանանց հիւանդութիւններ և մանկաբարձութիւն։

Հասցէն և ընդունելութեան ժամերի մասին տեղեկանալ «Գրուպպայի» գրասենեակից կամ «Пятигорское Эхо» լրագրից։

(շ.կ.) (առ.) 463. 10—10

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՆ

Ընդունում է հիւանդներին (բգի, քթի և ականջի հիւանդ.)

Կովկասեան հանքային ջրերում,

Մինչև սեպտեմբեր։

Пятигорскъ, Верхн. бульваръ., д. кн. Гирей.

(հ.կ.) (առ.) 370. 10—10

ԴԵՐՁԱԿ

Ընդունում է պատուէրներ

Եկեղեցական և հոգևորական զգեստների։

Միջին փողոց, Զիթախովի քարվանսարա, № 33. Յովհաննէս Մալխասեան։

(շ. կ.) (առ.) 559. 2—2

Կանանց I հիւանդանոց

Ծննդաբերական բաժանմունքով։

Բէբուտօվսկայա փող. 58, տէլէֆօն 230.

Բաց է ամբողջ տարին։ Ամառը բժ. Մ. Գ. ՄԿՐՏՉԵԱՆԸ մնում է հիւանդանոցում։

(շ. կ.) (առ.) 462. 10—10

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ

Թիւրքահայաստանից եկող լուրերը ցոյց են տալիս, որ այս տարի բերքը բաւարար է։ Մայիս ամսին սկսվել էր երաշտ, որ սպառնական բնաւորութիւն էր ստացել. բայց յետոյ տեղացին անձրևներ և կենդանացրին բուսականութիւնը։

Լեռնային շրջաններում դեռ բոլորովին չէ անցել վտանգը և դեռ կարող են արտերը այնտեղ վնասվել կարկուտից, երկարատև երաշտից և վաղահաս ցրտերից, բայց դաշտերի մեծագոյն մասը արդէն տուել է մխիթարական արդիւնք։

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, նոյնպէս նպաստաւոր է տարվայ բերքը թէ մեր երկրում և թէ հարևան Պարսկաստանում։

Միայն մի հանգամանք թուլացնում է տարվայ աչող բերքի արժէքը. այդ այն է, որ շատ և շատ տեղերում սերմացուի պակասութեան և իրանց քայքայված լինելու պատճառով գիւղացիները չեն մշակել այն բոլոր հողերը, որ ունեն իրանց տրամադրութեան տակ և չեն սերմանել այնպիսի քանակի և որակի սերմով, որպիսին կարելի էր աւելի ևս բաւարար և առատ արդիւնք ստանալու նպատակով։

Յամենայն դէպս՝ գիւղական ժողովուրդը այս տարի կունենայ իր ձեռքին միջոցներ թէ իր առօրեայ կարիքը հոգալու և թէ նրանցից մի փոքր բաժին հանելու կրթական և ուրիշ հասարակական նպատակների համար։

Դպրոցներ, արհեստանոցներ, շտեմարաններ, վարկատու հիմնարկութիւններ, արդիւնաբերական ընկերութիւններ և ուրիշ հաստատութիւններ, որոնց կարևորութեան մասին խօսվել է վերջին տարիների ընթացքում, կարող կը լինէին գտնել իրանց իրագործութեան համար որոշ չափով աջակցութիւն ժողովրդի կողմից, եթէ վերջինիս ղեկավարող և առաջնորդող անձեր կենդանի խօսքով և հեղինակաւոր նախաձեռնութեամբ գլուխ կանգնէին ձեռնարկութիւնների և եռանդուն կերպով նրանց իրականացնէին կեանքի մէջ։

Աչքի առաջ ունենալով, որ իւրաքանչիւր տարին նշանակութիւն ունի ժողովրդական կեանքի մէջ և որ շնորհիւ դժբաղդ հանգամանքների գիւղականը շատ ծանր կորուստներ է ունեցել իր տնտեսական և հասարակական զարգացման ասպարէզում, անհրաժեշտ է, որ այժմ, երբ մի փոքր թեթևացել են քաղաքացիական կեանքի պայմանները և տեղական միջոցներն էլ մի որոշ աստիճան հնարաւորութիւն են տալիս կուլտուրական նպատակների համար բաժին հանելու, հոգատար լինենք, որ հէնց առաջիկայ աշնանից բացվեն կարելիին չափ մեծ թւով կրթարաններ և հանրօգուտ հիմնարկութիւններ բեղմնաւորելու ժողովրդական կեանքը։

Կուլտուրական այն յետամնացութեան մէջ, որ թուլացրել է ժողովրդական աշխատանքի արտայայտութիւնը, միայն մի ելք կայ առաջխաղացութեան լայն ճանապարհի վրա ոտք դնելու. դա մի կողմից զարգանալը և գիտելիքներ իւրացնելն է, իսկ միւս կողմից մի շարք այնպիսի հաստատութիւններ և հիմնարկութիւններ ստեղծելը կեանքի մէջ, որոնք կազմակերպէին և կաղապարէին բարեփոխման գործադրութիւնը իրականութեան մէջ։

Ժողովրդական գործողի համար ամեն մի տարին կարևոր օղակ է այն մեծ շղթայաշարի մէջ, որ կազմում է այդ ժողովրդի կեանքի էութիւնը։

Ա. Բալանթար

ԿՈՉ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Տպագրելով այսօր Գ. Ջալխուշեանի նամակը, մենք մեր կողմից նորից կոչ ենք անում հայ հասարակութեանը՝ օգտվել առիթից և ձեռք բերել ժողովածուն («Հացի կտոր զէյթունցուն»), որի մասին խօսեցինք «Մշակի» մէջ, № 129, ու դրանով օգնութեան ձեռք կարկառել աղանացի դժբաղդ աղէտեալներին։

Մեր խմբագրութեան մէջ ունեցած 125 օրինակից մի-մի հատ կարող են ձեռք բերել ցանկացողները, նուիրելով 25, 20, 15, 10, 5 և յամենայն դէպս ոչ պակաս քան 3 րուբլի։ Գաւառացիները նոյնպէս կարող են դիմել կամ մեզ և կամ Գ. Ջալխուշեանին, Րօստով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 18 յունիսի

Հավասին հաղորդում են Կ. Պօլսից, որ զինւորական դատարանը վերջացրեց մարտի 31-ի դէպքերի քննութիւնը և որոշեց Աբդիւլ-Համիդին յանձնել պետական դատարանին։ (Հ. Գ.)

Լօնդօն, 19 յունիսի

Մէնշէն-Հաուսում լօրդ-մէրի մօտ ի պատիւ Պետական Խորհրդի և Դումայի անդամների կայացաւ նախաճաշ, որին ներկայ էին նաև ռուսական դեսպանը և դեսպանութեան պաշտօնեաները, իսկ անգլիացիների կողմից Լօնդօնեան Սիտիի ներկայացուցիչները։ Ճառեր արտասանեցին լօրդ-մէրը, Միլֆը, կոմս Բօբրինսկին, Գուչկովը և ռուսական դեսպան կոմս Բէնկէնդօրֆը։ Լօրդ-մէրը բաժակ առաջարկեց Թագաւորի կենացը։ Լսվում են «գի կինգ» բացագանչութիւններ. Նուագախումբը կատարում է «գօդ-սէվ-զի-կինգը»։ Ապա առաջարկվում է իր ժողովրդին սահմանադրութիւն շնորհող Մեծ Թագաւորի կենացը։ Լօրդ-մէրը յայտնում է, որ Լօնդօն ժամանելիս Թագաւորը կընդունվի անկեղծ ցնծութեամբ (ընդհանուր ծափահարութիւններ. Նուագախումբը կատարում է ռուսական «Боже, Царя храни» օրհներգը)։ Այնուհետև լօրդ-մէրը խմում է ռուսական հիւրերի կենացը, ընդգծելով որ իրան վիճակվեց ռուսաց օրէնսդրական հաստատութիւնների անդամներին ընդունելութիւն ցոյց տուող առաջին լօրդ-մէրը լինելու պատիւը։ Վերջին կենացը ծածկվում են «ուրա» բացագանչութիւններով։ (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 18 յունիսի

Սէյմի նիստերի ամառնային ընդմիջումից առաջ հաւանութիւն է գտել հիմնական օրէնքների յանձնաժողովի մշակած սէյմի ամենահպատակ ուղերձի բնագիրը, որի մէջ միջնորդութիւն է յարուցվում վերացնելու մայիսի 20-ի օրէնքով սահմանված նոր կարգը ֆինլանդական գործերը զեկուցանելու համար։ Ուղերձի մէջ յիշված են այն պատմական գլխաւոր մօմէնտները, որոնցով սահմանվել է Ֆինլանդիայի իրաւական դրութիւնը, որին, զէմստվօյի պաշտօնեաների կարծիքով, հակասում են մինիստրների խորհրդի ձեռնարկած միջոցները՝ մայիսի 20-ի կանոնները իրագործելու համար։ (Հ. Գ.)

Օդեսսա, 18 յունիսի

Տէխնիկական ընկերութիւնը վերջնականապէս դրական կերպով վճռեց Օդեսսայում 1910 թւին գեղարուեստաարդիւնաբերական, արհեստաւորական և գիւղատնտեսական ցուցահանդէս բանալու հարցը։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 19 յունիսի

Ֆէդայիները Անգիւշմանից անցան Կարդամ, որը Կէրէջից գտնվում է 15 վերստ հեռու։ Նրանք խրամատներ են փորում այնտեղ, դիրքեր պատբաստում և դասաւորում Թնդանօթները։ Նրանք օգնական ոյժեր ստացան Բաշտից։ (Հ. Գ.)

—

Ֆրանկֆուրտ—Մայնի վրա, 19 յունիսի

«Ֆրանկֆուրտ. Ցայտունգին» հեռագրում են Թէհրանից. «Շուկաները այսօր գրաւած են զօրքերով։ Յայտարարված է, որ նրանք բռնութեամբ բաց կանվեն, եթէ մինչև յունիսի 20-ի առաւօտը իրանք անձամբ բանալու չը լինեն։ Կառավարութեան առանձին յայտարարութեան մէջ ասվում է, որ շահը երկրին սահմանադրութիւն տուեց, բայց սահմանադրութեան թշնամիները օգնութեան կանչեցին օտարերկրեայ աւազակներին՝ վրացիներին և կովկասցի հայերին, որոնք կամենում են երկիրը մատնել անիշխանութեան։ Այժմ նրանք ամեն կողմից մտնենում են Թէհրանին։ Կառավարութիւնը պաշտպանելու է քաղաքը և նրա բնակիչներին բոլոր հնարաւոր միջոցներով և կը պատժէ իւրաքանչիւրին, ով օգնէ յեղափոխականներին։ Այդ պատճառով պատերազմական դրութիւն է յայտարարվում։ Ապստամբութեան ամեն մի փորձ կը ճնշվի իր սաղմային սկզբնաւորութեան մէջ։ Կառավարութիւնը առաջիկայում պատահելիք անցքերի պատասխանատուութիւնը ձըգում է նրանց»։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 19 յունիսի

Այն ժամանակ, երբ Թաւրիզի ֆէդայիների առաջնորդները թագնվել են Թաւրիզի Թիւրքական հիւպատոսարանում, Ուրմիայի ֆէդայիները Ուրմիայի Թիւրքական հիւպատոսական ներկայացուցիչ Պետրօ Էլլասի կողմից գործադրվող ճնշումներից գրգռված յարձակում են գործել նրա տան վրա։ Ֆէդայիներից սպանված ու վիրաւորված են մօտ 10 հոգի, իսկ Թիւրքերի կողմից վիրաւորված է մի զինւոր միայն։

Էլլասը, ինչպէս յայտնի է, որոնվելով անգլիական ոստիկանութեան կողմից՝ իր կատարած մի շարք խաբեբայական գործողութիւնների համար, Ուրմիա կանչել տուեց քիւրդերին և 150 Թիւրքական զինւորներ։ Երբ քիւրդերը սկսեցին կողոպտել քաղաքն ու շրջակայքը, ֆէդայիները յարձակվեցին Թիւրքական հիւպատոսարանի վրա։ Ռուսական փոխ-հիւպատոսարանի կառավարիչը հրացանաձգութիւնը դադարեցրեց և ազատեց սարսափահար եղած Էլլասին, որը բոլոր ժողովրդի ներկայութեամբ համբուրեց նրա ձեռքը։

Այդ դէպքերի լուրը նոր հարուած պատճառեց Թիւրքական հովանու տակ մտած Սաթթար-խանի և Բաղր-խանի նախկին ազդեցութեանը, որոնք այժմ երկուսով մնացել են միայնակ։ Ամենքը հեռացել են նրանցից. շուկայում այլ ևս չեն խօսում նրանց մասին։ Քաղաքում և շրջակայքում կատարեալ հանգստութիւն է տիրում։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 19 յունիսի

«Թայմսը» խօսելով ռուսաց օֆիցերների դէմ ուղղված բողոքի և նացիօնալիստների սպառնալիքների նըկատմամբ Թէհրանից ստացված տեղեկութիւնների մասին, նկատելով, որ ռուսական օֆիցերների սպանութիւնը Պարսկաստանում իբրպէս եւրոպացիների ապահովութեան ոչնչացումն կը նշանակէր, նախազգուշացնում է նացիօնալիստներին հեռու մնալ իրանց տուած սպառնալիքների իրագործումից օտարերկրացիների նկատմամբ, որը անմիջապէս առիթ կը տար յանցաւորներին պատժելու և աւելի ևս շարունակելու Պարսկաստանի գրաւումը օտար պետութեան կողմից անորոշ ժամանակով։ (Հ. Գ.)

—

«Рус. Вѣд.»-ի Պարսկաստանի Թղթակիցը Ղազվինից շարունակում է հաղորդել հետաքրքրական տեղեկութիւններ։ «Ղազվինը գրաւելուց յետոյ,—գրում է նա (տես «Մշակ» 129),—ֆէդայիների արշաւանքը կանգ առաւ։ Նրանց պարագլուխ սիփէհդարը վերաբնակվեց քաղաքից դուրս եղող իր այգում, իսկ նրա շուրջը վրաններում զետեղվեցին ռազմական տեսակէտից լաւագոյն ոյժերը, մօտ 400 մարդ։ Արձակվեցին անփորձ հրացանաձիգները, իսկ մի քանի կովկասցի ֆէդայիներ մեկնեցին տեղից։ Հեռացածների զէնքերը պահ արվեցին տեղական արսենալում։ Սա նրա համար էր, որ հաւատացնեն ռուս հիւպատոսին, թէ ամեն ինչ կարգին է, տիրում է խաղաղութիւն, որ ֆէդայիները, սահմանադրութիւնը վերականգնելուց յետոյ, հրաժարվում են Թէհրանի վրա արշաւելու մտադրութիւնից։ Բայց բանն այլ էր. ֆէդայիները չեն հաւատում ոչ շահին, ոչ ռուս և անգլիական դիպլօմատների հաւատացումներին, թէ սահմանադրութիւնը յարատև է։ Նրանք, ֆէդայիները, չեն հրաժարվում Թէհրանը գրաւելու մտադրութիւնից։ Եւ ըստ երևոյթին նրանք ունեն այդ հնարաւորութիւնը։ Մեզ մօտ ամեն ինչ պատրաստ է, ասում է ինձ նրանց պարագլուխներից մէկը, մենք հեշտութեամբ կը վերցնենք Թէհրանը, որովհետև թէ պարսկական կօզակները և թէ լաւ վարժված կառավարչական զօրքերը չեն թողնի շահի անձի և ամարանոցի պաշտպանումը։ Թէհրանում մերոնք նոյնպէս պատրաստ են, և մենք այնտեղ կը ստանանք լաւ օգնութիւն»։

Մայիսի 30-ին և 31-ին Խորասանից վերադարձած և մեծ ժողովրդականութիւն վայելող Ղազվինի մուշտայիդ սէյիդ Ջամալը, ֆէդայիների առաջարկութեամբ, քարոզներ խօսեց Մեծ-Ջումա մէջիդում, յորդորելով ազգաբնակութեանը արշաւել դէպի Թէհրան, որպէսզի «սփիական արեան գնով ձեռք բերվի ժողովրդական իրաւունքը»։ Չէ կարելի անտես անել այն հանգամանքը, որ Ղազվինի հասարակ բնակիչները սկսում են տրտնջալ ֆէդայիների սպառնալիքներից։ Ղազվինը մեծ քաղաք չէ և ոչ հարուստ, սակայն 500 ֆէդայիներ կերակրելու համար նրանից պահանջում են մօտ 10,000 թուման (17,000 րուբլի)։ Այս գումարը հաւաքվում է բնակիչներից՝ անջումանի հրամանով։ Առժամանակ ոյժը ֆէդայիների կողմն է, բայց ինչ կը նշանակէ նա, եթէ դրամ գանձելու հնարաւորութիւն չը մնայ... Իսկ Պարսկաստանի ժողովրդի մօտ շատ փող չը կայ...

ԿՐԷՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—

Սալոնիկ.—Կրէտական հարցը տաք խօսակցութիւնների առարկայ է դարձել ազգաբնակութեան մէջ։ Խիստ վրդովմունք է նկատվում յոյների դէմ։ Իշխանութիւնը լուրջ միջոցներ է ձեռք առնում հրոսակախմբերի կազմակերպութեան դէմ։ Սալոնիկի շրջանում բազմաթիւ յոյներ են կալանաւորված։ Շատ յոյն ընտանիքներ հեռանում են Թիւրքիայից։ Թէսալիայի սահմանագլխի վրա պատերազմական պատրաստութիւնները առաջ են տարվում մեծ եռանդով։ («Р. С.»)

—

Բեռլին.—«Լօկ. Անցէյգ.» հեռագրում են Սալօնիկից յունական սահմանագլխի վրա շարունակվող պատերազմական տենդային պատրաստութիւնների մասին։

Աթէնքից էլ հեռագրում են «Ֆօսիշ. Ցայտ.»-ին, որ այնտեղ ամեն օր Գէօրգի Թագաւորի նախագահութեամբ տեղի են ունենում զինուորական խորհուրդներ և մշակվում է ռազմական մանրամասն ծրագիր Թիւրքիայի դէմ պատերազմելու համար։

(«Р. С.»)

—

Վիէննա.—Կամենալով պաշտպանել Կրէտէ կղզու ազգաբնակութիւնը, մեծ պետութիւնները յայտնել են Բ. Դրանը, որ թոյլ չեն տայ կղզին գրաւել Թիւրքական զօրքերով եւրոպական զօրքերի հեռացնելուց յետոյ։ Իսկ եթէ Թիւրքիան այնուամենայնիւ զօրք փոխադրէ այնտեղ, այն ժամանակ մեծ պետութիւնները ազգաբնակութեան պաշտպանութեան համար կրէտական ափերը կը յայտարարեն պաշարված։

(«Р. С.»)

—

Արժանահաւատ աղբիւրից «Р. С.» լրագրի Թղթակիցը լսել է, որ դիպլօմատիական շրջաններում շատ մռայլ կերպով են նայում Թիւրք-յունական վէճին և մտադիր են, ծովային ցոյց անելով յունական ջրերում, համոզել Յունաստանին, որ Եւրոպան ներկայումս մտադիր չէ բաւարարութիւն տալ յոյների ձգտումներին։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ղօչան, 7 յունիսի

Այսօր առաւօտեան քաղաքս մտան 100 հոգի ռուսական կօզակ՝ Մէշէդ գնալու համար։ Զօրքը փոքր հանգստանալու նպատակով իջել է քաղաքիս միւս ծայրին՝ դէպի Մէշէդ տանող ճանապարհի մօտերքը։

Օտար պետութեան զօրքերի Խորասանի նահանգը մտնելը բաւականաչափ մտահոգութիւն է պատճառել թէ տեղական անջումանին և թէ քաղաքիս ազգաբնակութեանը։

Արժանահաւատ աղբիւրից ստացված տեղեկութիւնների համաձայն, ամսիս 6-ին Մէշէդ է հասել Խորասանի նախկին նահանգապետ պրինց Րուքնը-Դովլէն։ Մէշէդի ամբողջ բնակչութիւնը նրան ուրախ ողջոյններով է ընդունել։ Թէ ապագայում պրինցն ինչ քաղաքականութեան կը հետևէ, այդ մասին առ այժմ չենք կարող ոչինչ ասել։

Տեղիս ազգաբնակութիւնն ընդհանրապէս թերահաւատութեամբ է վերաբերվում տըրված սահմանադրութեանը և մտածում է, որ այդ կիսատ-պռատ սահմանադրութիւնը այսօր կամ վաղը իրանից դարձեալ կը խլվի, ինչպէս Մուզաֆֆերէդդին շահի մեռնելուց յետոյ։

Քաղաքիս շրջակայքում յաճախ տեղի են ունենում գողութիւններ ու մարդասպանութիւններ։ Անցեալ օր քաղաք բերին մի խեղճ մարդու յօշոտված դիակ. նրան սպանելով տարել են 30 թուման կանխիկ փող։ Դիակը տարվեց անջումանի և այնտեղից էլ գերեզմանատուն։

Քաղաքում առ այժմ դրութիւնը խաղաղ է և փողոցներում զինված սահմանադրական մուջահիդներ են շրջում... Իգս

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պօլիս, 10 յունիս

Երկու օր է, որ «Բիւզանդիոն» սկսաւ հրատարակուիլ իր նախկին ձևով և ուղղութիւնովը։ Պէտք է ըսել, թէ աժան ազատեցաւ։ Խեղճ «Մանզումէն» դատապարտուեցաւ չորսամսեայ դադարի և 50 ոսկի տուգանքի։ Առաջինին յաջողութիւնը և վերջինին ձախողումը, կարծեմ, կապ ունի մասամբ երկու Թերթերուն արտօնատէրերու անձնական-բարոյական արժանիքին հետ. «Բիւզանդիոնի» արտօնատէրը, միևնոյն ատեն, Թերթին խմբագրապետն է, վարիչն է, ուղղութիւն տուողն է, փորձ իր ընդգրկած ասպարէզին մէջ. «Մանզումէի» արտօնատէրը, կեսարացի հայ մը, որ իր հրատարակած լեզուին ալ անծանօթ է, անշուշտ դժբաղդութիւն ունէր անտեղեակ մընացած ըլլալու Թերթին պարունակութեանը։ Այդ պարագան կշռած ըլլալու է «Մանզումէի» դատապարտութեանը մասին։ Միևնոյն ատեն գիտենք, որ այդ Թերթը քիչ մը աւելի տրամադիր էր փոքր լուրերը ուռած ձևով տալու, քիչ մըն ալ աւելի խիզախ ըլլալով՝ քանիցս պաշտօնական ազդարարութեանց տեղի տուած էր և, այդ կերպով, Թիւրք շրջանակներու մէջ ճանչցուած էր իբրև Թէ գրգռիչ։ Իսկ ամենէն աւելի կշռողը, ծանրապէս կշռողն է ու պիտի ըլլայ Թիւրքական դատական անձկամտութիւնը, ու ներքին ծրագիր մը, նեղկուկ, Թիւրքամոլ, որ հիմքը կը կազմէ ամեն պաշտօնական գործողութեանց։

Զինուորական ատեանը կը խոստանայ, քանի մը օրէն, կախաղան բարձրացնելու համար, պարարտ վիզ մը՝ Թօփ-սաքալ Մէհմէդ փաշա։ Այդ մարդը պալատի հին գործիչներէն է. իր պաշտօնը եղած է, տարիներով, Մարմարայի անդունդներուն մէջ իջեցնել Թիւրք գըրգռականներ, անոնք՝ որ պալատին կասկածելի եղած էին Համիդեան դրութեան ատեն։ Այդ փաշան, տարիներով շարունակած այդ մահացումի գործը, կրցեր է անխռով ապրիլ ի պատիւ Համիդի։ Բայց մէթէ խակապէս յանցապարտը ըլլալու է այդ մարդը իբրև հրամանատար. բուն ոճրագործը կապրի անձեռնմխելի, և Թիւրք արդարադատութիւնը կը պատժէ կրաւորական պաշտօնեաները։ Անշուշտ ըսել չեմ ուզեր, թէ անմեղ մը կը դատապարտուի, այլ նշանակել կէտ մը դատական գործողութեանը մէջ։

Ադանայի մէջ զինուորական ատեանները կը գործեն իրենց ծրագրին համեմատ. ինքնապաշտպանութեան դիմող հայերէն վեց զոհեր տուինք արդէն կախաղանի. ուրիշները՝ մեծ Թիւով բանտերու մէջ են։ Նոր դատապարտութիւններ տեղի ունեցած են մեծագոյն Թիւերով, 10—15 տարուան բերդարգելութեան, մինչդեռ Թիւրքերէն կը դատապարտուին մէկ տարուան, երկու տարուան համար։

Շէվքէթ փաշայի դիմում եղաւ պատրիարքարանի կողմէ։ Զինուորական դիկտատորը, ուրկէ այսօր կախում ունի ամեն բան Թիւրքիոյ մէջ և առանց որու տերև մը անգամ չի շարժիր, կը յայտարարէ, թէ ինքը վստահ է Ադանայի մէջ գործող զինուորական ատեաններուն, ամեն բան անաչառօրէն գործ կը դրուի։ Ի՞նչ կը մնայ ընել մեզի. լռելեայն կերպով մեզի հասկըցնել կուտան, թէ անօգուտ է ոևիցէ գիտութիւն, որովհետև իրենք պիտի գործեն իրենց արդարադատութեանը համեմատ։

Կ. Պօլիսը զարհուրելի միջավայր կազմած է. հաւատարիմ է ան իր պատմական կոչումին,—իւրացնել, ապականել և ոչնչացնել։ Շէվքէթ փաշան, ինքն ալ հիմա «խելքի եկած է» Թիւրքերու բառին համեմատ։ Պօլիս մտած ատենը, երբ տակաւին անկախ էր իր ըմբռնումներու մէջ, ու երբ տակաւին Թարմ էր իր զինուորական գործողութեանցը մէջ, այն ատեն հայերու վրայ կը տեսնէր հարստահարուած մարդկութիւն մը, որ երկրին ազատագրութեանը մասին ունեցած էր իր զօրեղ և զոհուած գործունէութիւնը. իսկ այսօր, նոր համոզումներու եկած, «Թանին»-ի խմբագրապետին հետ, Ադանայի դիակներուն, փտած միսերուն, մորթոտուած երախաներուն մէկ կտորին մէջ կը տեսնէ ապստամբութեան, անջատողականութեան գաղափարները։ Ու, այդ ըմբռնումով, Թոյլ կուտայ, որ զինուորական ատեանները գործեն ա-լա-Թիւրքա արդարութիւնով, այսինքն՝ 30,000 զոհերուն վերև կախաղանի սիւներուն մէջ երերցնեն հայ երիտասարդներ, անոնք որ, մահու և կեանքի դժոխային կռիւին մէջ, դիմադրելու յանդգնած էին։

Մեր այդ արդարասէր կառավարութիւնը կը շարունակէ կրկնել իր պահանջումները հինգ երիտասարդներու մասին, որոնք, Ջարդի ատեն, ապաստանած են Մեսինի անգլիական հիւպատոսարանը։ Հիւպատոսը կը գիջանի տեղի տալ կառավարութեան պահանջումին առջև, պայմանաւ որ ինքը ներկայ գտնուի հարցաքննութեանց։ Զինուորական ատեանը, անքննադատելի և արդարադատութեան բարձունքներուն վրայ, յանձն չառներ արտաքին ոևիցէ ծակ մը Թողուլ, ուրկէ կարելի ըլլայ լոյս մը արձակել տալ իր գործողութեանցը վրայ։ Կը մերժէ հիւպատոսին առաջարկութիւնը, և որ, փոխադարձ, կը մերժէ տեղի տալ կառավարութեան պահանջումին առջև։

Որբերը կը զբաղեցնեն ազգ. ասկէ առաջ Պօլիս հասած էին 25 որբեր, ամենքն ալ մանչ, որոնք ղրկուեցան Ռօդօսթօ։ Երկու օր առաջ հասան 22 որբ աղջիկներ, որ բերել տուած է Դպրոցասէր Տիկիններու Ընկերութիւնը։ Ատոնք, մինչև սեպտեմբեր, պիտի խնամուին նոյն ընկերութեան անդամակցուհիներու տուներու մէջ և այնուհետև պիտի ընդունուին համանուն դպրոցին մէջ, որ պիտի բացուի սեպտեմբերին։

Մեր արդարադատ կառավարութենէն մեծ աղմուկներով ղրկուած 30,000 ոսկիէն մերիններուն բաժնուած է 2—3000 ոսկի. 27,000 ոսկի, առատաձեռն կերպով, բաժնուած է անոնց անշուշտ, որոնք Ջարդի, Թալանի ու կրակի գործը յաջողցուցած էին ի պատիւ օսմ. կառավարութեան։ Կարծեմ ասկէ շատ առաջ գրած եմ այդ դրամի մասին, Թէ պիտի բաժնուէր ոճրագործներու, որպէսզի, ի հարկին, այդպիսիները պատրաստ ըլլան իրենց Թանկագին ծառայութիւնը ընելու երկրին, սահմանադրութեան, անշուշտ այն սահմանադրութեան, որ Թիւրքական ըմբռնումով կը նպաստէ նոր տեսակ Ջարդ, նոր տեսակ հարստահարութիւն, նոր տեսակ բռնաբարութիւն,—քանդում երկրին։

Պէտք է հաւատալ, Թիւրքը չի փոխուիր ներքնապէս. իր նշանաբանն է՝ աւեր, ապականութիւն։

Ամսուս 9-րդ օրէն սկսաւ հրապարակ ելլալ նոր Թերթ մը՝ «Ազատամարտ»։ Իր յայտարարութեանը մէջ կուսակցական ոչինչ կայ, միայն կը խոստանայ պայքար մղել յետադիմական գաղափարներու մէջ, ու կը հաւատայ, Թէ նոր տեղ մը պիտի բռնէ պօլսական «անգոյն մամուլի մէջ»։ Թէ որքան իրաւացի է այդ յայտարարութեանը մէջ «Ազատամարտ», պիտի տեսնենք գալիքին մէջ։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—

Չորեքշաբթի, յունիսի 17-ին, կայացաւ Թիւրքահայաստանի տառապեալներին օգնող Հանգանակիչ Մասնաժողովի նիստը, նախագահութեամբ Ալ. Քալանթարի, անդամակցութեամբ բժշկ. Կ. Ստեփանեանի, տ. Հ. Մարտիրոսեանի, Ա. Սարուխանեանի, Հ. Վահանեանի, Աւ. Արասխանեանի և Հ. Առաքելեանի։

Մասնաժողովը հաճութեամբ լսեց, որ իր յարուցած միջնորդութիւնը տեղապահ Սուրէնեան սրբազանի միջոցով, Թոյլ տալ շարունակել Մասնաժողովի գործունէութիւնը և հանգանակութիւնը ի նպաստ Թիւրքահայաստանի տառապեալների, յարգվել է Թէ Փոխարքայի և Թէ մինիստր-նախագահ Ստոլիպինի կողմից, որոնք հնարաւոր են գտել, որ Մասնաժողովը գոյութիւն ունենայ և հանգանակութիւն կատարէ մի տարի ևս, այն է մինչև 1910 թ. գարունը։ Մասնաժողովի վրա պարտաւորութիւն է դրվում հանգանակվող դրամները հասցնել Կ. Պօլսի հայոց պատրիարքին ռուսաց դեսպանատան միջոցով և պարբերաբար հաշիւ ներկայացնել Փոխարքայի դիւանատան։ Որոշվեց՝ ճշդութեամբ կատարել Փոխարքայի պահանջները և վերսկսել Մասնաժողովի գործունէութիւնը և հանգանակութիւնը, տպելով լրագիրներում կոչ հայ ժողովրդին օգնութեան ձեռք կարկառելու մանաւանդ այժմ, երբ այնքան մեծ աղէտ տեղի ունեցաւ Ադանայում։

Գանձապահ Ա. Սարուխանեանը զեկուցեց, որ պատրաստի դրամ կայ 3000 րուբլի. բացի դրանից 2200 ր. փոխանակագրեր են ստացված Մասնաժողովի և նախագահ Ալ. Մելիք-Ազարեանի անունով, որոնք դեռ չեն գանձվել, վերջինիս բացակայութեան պատճառով. 500 րուբլի ևս ստացվել է «Մշակի» խմբագրութիւնից, ուրեմն այժմ պատրաստի դրամ կայ 3500 րուբլի։ Ի նկատի ունենալով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցանկութիւն է յայտնել, որ ունեցած դրամը անմիջապէս փոխադրվի, որովհետև Ադանայում սոսկալի է Թշուառութիւնը, Մասնաժողովը որոշեց փոխադրել անմիջապէս 400 օսմանեան ոսկի Կ. Պօլսի հայոց պատրիարքին՝ ռուսաց դեսպանատան միջոցով, Ադանա ուղարկելու համար։

Այս առիթով Սարուխանեանը զեկուցեց, որ ամսիս 7-ին Մուշտայիդի այգում յօգուտ ադանացիների կազմված զբօսանքի զուտ արդիւնքը, 3400 րուբլի, կարգադրիչները փոխադրեցին Վեհ. Կաթողիկոսի միջոցով ռուսաց դեսպանին, պատրիարքին յանձնելու համար։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

—

Յունիսի 19-ին, ուրբաթ երեկոյեան, «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան կից գրական-գեղարուեստական սալօնում տեղի ունեցաւ հերթական երեկոյթ նուիրված ի պատիւ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Մատթէոս II-ի։

Երեկոյթին ներկայ էին Վեհափառի շքախմբի անդամներից Շուշու Թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը, Գրիգորիս ու Մեսրոպ Թիւրքահայ վարդապետները, հասարակական գործիչ Մինաս Չերազ, տեղական հայ գրականագէտներից, արուեստագէտներից շատերը։ Կային նաև երկսեռ ու օտարազգի բազմամարդ հիւրեր։

Եկող հիւրերին սիրալիր ընդունելութիւն էր ցոյց տալիս Տ. Նազարեանը իր յարգելի մօր հետ միասին և հիւրասիրում Թէյով։ Ժամը 9-ին սկսվեց երեկոյթի երաժշտական մասը. յաջորդաբար մի քանի անգամ ռուսերէն և հայերէն երգեցին տ. Հեղինէ Նաւասարդեան, տ. Ս Ն. Նիկոլայէվա և օր. Մարինէ Սօլովեան. դաշնամուրային նուագածութեան մասը կատարում էր Թիֆլիսի արքունական օպերային Թատրօնի համերգների ղեկավարուհի տ. Օ. Պ. Միխէեվա, որը երբեմն ղեկավարել է յայտնի երգիչներ Շալյաւեանին, Կամենսկուն և այլն, ինքն էլ նախկին երգչուհի է և լաւ լսողութիւն ունի։ Նուագեց նաև Ր. Ա. Լէվինան, որը նորերս միայն եկել է Պետերբուրգից ու շատ մեծ առաջադիմութիւն է արել

Թէ երգչուհիներին և Թէ դաշնակահարուհիներին հանդիսականները վարձատրեցին ծափահարութիւններով։

Վերջում Յ. Ճուղուրեան քահանան կարդաց Արսէն քահ. Բագրատունու «Նորելուկներին» այլէգօրիա-բանաստեղծութիւնը, որը յատկապէս այդ երեկոյթի համար յօրինել էր հեղինակը և, հիւանդութեան պատճառով, անկարող լինելով անձամբ ներկայ լինել, ուղարկել էր նամակով։

Երեկոյթը անցաւ ուրախ և հիւրերը գոհ սրտով, շնորհակալութիւն յայտնելով երեկոյթը կազմակերպողին, ցրվեցին գիշերվայ ժամը 11 և կէսին։

ԴԷՊԻ ԱՆԻ ԵՒ ՈՒՐԻՇ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երևան, 17 յունիսի

Մայիսի 25-ին Թեմական դպրոցի ուսուցիչ Պառաւական Քուչմանեանցի առաջնորդութեամբ նոյն դպրոցի VI դասարանի ընթացաւարտ աշակերտները, թւով 14 հոգի, Երևանից դուրս եկան գիտական էկսկուրսիայի դէպի Անի, Բէջ-քիլիսա, Բագարան, Երուանդակերտ և այլն։

Այդ նպատակի համար դպրոցի հոգաբարձութիւնը յատկացրել էր 40 ր. նպաստ։ Երկաթուղով գնալով մինչև Անի կայարանը՝ այնուհետև ճանապարհը շարունակել են ոտով մինչև Խարկով գիւղը, որը գտնվում է Ախուրեանի ափին։

Ապա նաւակով անցնելով Ախուրեանից մտել են Անի։ Օր ու կէս այդտեղ մնալով և պրոֆեսոր Մառրի օգնական ուսանողների սիրայօժար բացատրութիւնների շնորհիւ մանրամասն ծանօթանալով եղած հնութիւնների ու պատմական փաստերի հետ և տեղն ու տեղը ուսումնասիրելով աւերակներն ու Թանգարանը անցել են Ղօշավանք։ Այդտեղ էլ տեսնելով և ծանօթանալով վանքերի և նշանաւոր հնութիւնների հետ, նաև համբուրելով Աշոտ Ողորմածի գերեզմանը՝ գնացել են դէպի Տիկոր։

Ճանապարհին դիտել են Մաղասաբերդի նշանաւոր հին աւերակը՝ որը շինված է հայազգի Մօրիկ կայսրի հրամանով և հայ իշխան Մաղասի ձեռքով։ Տիկոր գիւղում աշակերտներին մերժել է հիւրընկալել եկեղեցու երէցփոխ Սաքօն, ասելով թէ «հօ ես նրանց մշակները չեմ», թէև առաջնորդ ուսուցիչը յայտնել է նրան, թէ միայն գիշերելու տեղ է ուզում, իսկ ուտելիքը գնացողների հաշուին պիտի լինի։

Դրա փոխարէն ուղևորներին ամենասըրտագին հիւրընկալութիւն են ցոյց տուել Տիկորի ռուսաց դպրոցի ուսուցիչներ Վահան Գասպարեան, Ստափիլօվ Խրիստաֆօր, Ծպնի գիւղի ուսուցիչ Լևոն Աբրահամեան և Տիկորի ֆելդշեր Մանուկ Մանուկեան, որոնք բացի անկեղծ ընկերական հիւրընկալութիւնից՝ սիրայօժար կերպով առաջնորդել են ուղևորներին դէպի շրջակայ նշանաւոր տեղերը և անհրաժեշտ ցուցմունքներ տուել պատմական ճանապարհորդութեան մասին։

Տիկորում ուղևորները հանդիպել են ճարտարապետ Թօրամանեանին, որը խիստ շահեկան և հետաքրքրական ցուցմունքներով մանրամասն տեղեկութիւն է հաղորդել Թէ Տիկորի վանքի հնութեան (427 Թւին շինված) և Թէ հայկական ճարտարապետութեան զարգացման ու կրած փոփոխութիւնների մասին։ Ապշեցուցիչ են եղել յարգելի ճարտարապետի աննկուն ջանքերը, որոնցով նա իսպառ անձնատուր է եղած մեր հին ճարտարապետութեան ուսումնասիրութեանը։

Այնուհետև յիշեալ ուսուցիչների հետ այցելելով Բէջ-քիլիսայի և Ագարակի վանքերը անցել են դէպի Նախճաւան, որտեղ կարդացել են Շիրակայ և Արշարունեաց պատրիկ Հրահատ Կամսարականի որդու՝ Ատրորմիզդ Կամսարական հիւպատ պատրիկի և հայոց իշխանի նորագիւտ գերեզմանի արձանագրութիւնը։ Ապա գնացել են հին հայոց աստուածների քաղաք՝ Բագարան, վայելելով Պետրոս և Աբրահամ Գալոյեանների սիրալիր հիւրասիրութիւնը։ Բագարանի ծխական դպրոցի ուսումնասէր և աշխոյժ ուսուցիչ Յովհաննէս Պետրոսեանի առաջնորդութեամբ մանրամասն կերպով ծանօթացել են Բագարանի բերդի և նշանաւոր շինութիւնների հետ, մանաւանդ ս. Թէոդորոս վանքի շինութեան և Թագաւորների գերեզմանների հետ, կարդալով նրանց արձանագրութիւնները։ Նոյն ուսուցիչ՝ Պետրոսեանի յօժարակամ առաջնորդութեամբ ուղևորները գնացել են հին Երուանդակերտ մայրաքաղաքի աւերակները տեսնելու։

Դիտել են Հաջի-բայրամ Թուրք գիւղի հնուց մնացած բերդի պարիսպները և խաչքարերը. ապա անցնելով մինչև Ախուրեանի և Արաքսի միացման տեղը (Կողբի գիժացը) և կամուրջի բացակայութեան պատճառով անկարող լինելով անցնել Արաքսից՝ վերադարձել են Բագարան։ Հետևեալ օրը նոյն Պետրոսեանի առաջնորդութեամբ Ախուրեանի կանաչազեղ և սքանչելի հովտով գնացել են Բագրատունեաց վաղեմի Մրէն ամարանոցը՝ դիտել են վանքերի, պալատների և բնակարանների չքնաղ մնացորդները և ի սրտէ ցաւել, որ Մրէնը իր հարթ և կանոնաւոր մակերևոյթով, առատ և բերրի հողով, գեղանի դիրքով և քաղցր օդով մնացել է անբնակ, մինչդեռ կենսական ամէն յարմարութիւններ կան թէ բնակութեան և թէ արդիւնաբերութեան համար։ Ցաւալի է նաև այն հանգամանքը, որ 12 տարի շարունակ այդտեղ բնակութիւն հաստատած, հողը մշակած, այգիներ ձգած մի քանի ընտանիքներ ինչ-որ Թայֆայական կռիւների շնորհիւ թողել են ամեն ինչ և հեռացել։ Այն-ինչ Մրէնը, ինչպէս իմացանք, գաղթականութեան համար ամենայարմար և արդիւնաւէտ տեղն է։

Մրէնից ուղևորները եկել են Ալագեօզ կայարանը և երկաթուղով վերադարձել են Երևան յունիսի 1-ին, անհուն գոհունակութիւններով լցված, որ մի քանի օրվայ իրանց կատարած էկսկուրսիայով նրանք բաղդաւոր առիթ ունեցան ծանօթանալ թէ հայ ժողովրդի նիստ ու կացի և կարիքների հետ, թէ պատմութեան մէջ յայտնի տեղերի հետ և թէ մանաւանդ այդքան առատ տեղեկութիւններ ստացան դրանց մասին ու հարստացրին իրանց մտաւոր պաշարը։

Մեր կողմից չենք կարող չաւելացնել, որ դպրոցը պարտաւոր է յաճախ կազմակերպել նմանօրինակ էկսկուրսիաներ ոչ միայն աւարտողների, այլև նոյնիսկ III և VI դասարանների աշակերտների համար։ Այդ նպատակին կարելի է հասնել աւելի սրտագին և անկեղծ վերաբերմունքով, քան թէ ասպարէզ հանելով իրանց գծուծ անձնական նեղ հաշիւները, որոնցով աշակերտներին զրկում են մի մեծ բաւականութիւնից։

Ուսուցչական սեմինարիայի աշակերտներից մի խումբ Վրթանէս քահանայ Տէր-Մովսէսեանի առաջնորդութիւնով ուղևորվում է դէպի Անի։ Ախուրեանի ափին, առաջ ընկած աշակերտներից մի հոգի, Թուբք կամենում է առով անցնել, կարծելով թէ գետը ծանծաղ է։ Բայց մի քանի քայլ դէպի խորը գնալով ընկնում է հոսանքի առաջ և տարվելով դէպի խորը՝ խեղդվում է։ Երկար ժամանակ զուր տեղը փնտռելով ընկերոջ դիակը և չը գտնելով վերադառնում են Երևան։

Նոյն էկսկուրսիայի նպատակով Երևան հասան ամսիս 11-ին Նոր-Նախիջևանի Թեմական դպրոցի VI դասարանի աշակերտներ, թւով 13 հոգի, ուսուցիչ Գէորգ սարկաւագ Զօրէքչեանի առաջնորդութիւնով։

Նրանք եղել են Բագու, Թիֆլիս, Սանահին, Հաղպատ, Ղարաքիլիսա, Դիլիջան, եկան և Երևան։ Այստեղից ուղևորվեցին ոտքով Գեղարդ, յետոյ այնտեղից պիտի անցնեն Խորվիրապ, Էջմիածին, Բաշաբարան, Ղփչաղ, Ալէքսանդրապօլ, Անի և ռազմավիրական ճանապարհով կը վերադառնան իրանց տեղը։ Ինչպէս իմացանք, ճանապարհածախքը արել են վաճառականական ակմբանոցը, եկեղեց. հոգաբարձութիւնը, բարեգործ. ընկերութիւնը և Թատերասէրների ընկերութիւնը։ Գովելի էր հայր սարկաւագի եռանդը. ոտքով ընկած աշակերտների հետ, զրուցելով, գնում էր դէպի Գեղարդ։

Գ. Աղաղադեան

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԻ

Թիֆլիսի փոխադարձ վարկի երկրորդ ընկերութիւնը նորերս ստեղծել է մի մեծ դիւրութիւն Թիֆլիսում և առհասարակ Անդրկովկասում աշխատող թիւրքահայ պանդուխտների համար, որի մասին շատ ցանկալի կը լինէր անել լայն տեղեկացում ի գիտութիւն նրանց։

Բանը նրանումն է, որ մինչև այժմս Թիֆլիսի բանկերը փոքրիկ գումարներ չէին փոխադրում Թիւրքիա առհասարակ, և մանաւորապէս, ինչ գումարներ էլ լինէին, Վան, Մուշ, Բաղէշ և այլ մանր քաղաքներ։ Պանդուխտ թիւրքահայերը ստիպված մասնաւոր «բարաթով» էին փոխադրում իրանց կօպէկները։ «Բարաթչիները», գլխաւորապէս նոյն թիւրքահայերից, վերցնում էին վաշխառուական վարձատրութիւն, խաբում էին թիւրքական ոսկու կուրսում, իսկ փոխադրութիւնները, շատերի պատմելով, ամիսներով տեղ չէին հասնում։

Այժմ փոխադարձ վարկի երկրորդ ընկերութիւնը, յարաբերութիւն հաստատելով Տրապիզոնի մի բանկային հիմնարկութեան հետ, որ ունի իր գործակալները Թիւրքահայաստանի ամեն քաղաքներում, վերցնում է իր վրա փոխադրութիւններ Թիւրքիա, այն էլ շատ չնչին վարձատրութեամբ, գրեթէ այն գնով, ինչ որ արժէ ներքին փոխադրութիւնը Ռուսաստանում։ Ինչ ասել կուզէ, որ բացի անկորուստ հասցնելը, որի համար պատասխանատու է ընկերութիւնը, փոխադրութիւնը կատարվում է շատ արագ և առանց կուրսի խարդախման։

Չէ կարելի չը շնորհաւորել վարկի ընկերութեանը այս գեղեցիկ մտքի իրագործման համար և շատ ցանկալի կը լինէր, որ լրագիր կարդացող թիւրքահայ պանդուխտները կամ ովքեր որ հնարաւորութիւն ունեն՝ տեղեկացնէին սրա մասին մնացած պանդուխտներին։

Փոխադրութիւնները ընդունվում են այս քաղաքները՝ Կ. Պօլիս, Տրապիզոն, Կիրասոն, Օրդու, Սամսոն, Րիզէ, Գիւմիշխանէ, Բայբուրթ, Էրզրում, Երզնկա և Վան։

Թիֆլիսում գտնվող պանդուխտները կարող են փոխադրութիւններ անել անմիջապէս բանկի միջոցով, իսկ մնացած Անդրկովկասում բնակվողները՝ պօստային փոխադրութիւնով Թիֆլիսի երկրորդ փոխադարձ վարկի անունով, ծանուցանելով, ի հարկէ, թէ ուր պիտի փոխադրել գումարը։

Պետրոս Զաքարեան

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Երէկ, յունիսի 20-ին, մեծ հանդէսով և շուքով կայացաւ Ներսիսեան դպրոցի նոր շինութեան հիմնարկութիւնը, որին ներկայ էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II, ամբողջ հայ հոգևորականութիւնը, Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին, փոխ-նահանգապետ Չեռնեավսկին, ոստիկանապետը, քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեան, հայ ինտելիգենցիայի և ազգային, կուլտուրական, հասարակական բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչները և ժողովրդի խուռն բազմութիւն։

Կաթողիկոսը ամպհովանու ներքոյ, զգեստաւորված, ներկայ եղաւ հիմնարկութեան օրհնութեան և ինքն իր ձեռքով դրեց հիմնարկութեան առաջին քարը, իսկ երկրորդ քարը տուեց դնելու Թիֆլիսի նահանգապետին։ Երրորդ քարը դրեց Թիֆլիսի Թեմի առաջնորդ և Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան նախագահ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան։ Իբրև պատիւ տուեցին դնելու քարեր հասարակութիւններից զանազան անձերի — Մինաս Ջերազին, Ալ. Խատիսեանին, հոգաբարձութեան անդամներին, Ալ. Քալանթարին, Հ. Առաքելեանին, Ա. Սարուխանեանին և այլոց։ Հոգաբարձութեան կողմից մի համառօտ՝ բայց գեղեցիկ ճառ խօսեց հոգաբարձու Ա. Պօպօվեան։ Մի ճառ ևս խօսեց Ց. Տէր-Միրաքեան։ Ապա Մատթէոս II Ամենայն Հայոց Կաթողիկոսը մի իմաստալից քարոզ խօսեց, ցոյց տալով Ներսէս Աշտարակեցու՝ վսեմ նշանակութիւնը, նրա հիմնած գործի մեծութիւնը, օրհնեց բարերար Ալ. Մանթաշեանին՝ արծարծելով այն միտքը, թէ Ռուսաստանում մտաւորական բարգաւաճումն և քաղաքակրթական զարգացումն հայ ժողովուրդը պարտաւոր է Ռուսաց Մեծազօր Պետութեան հովանաւորութեան, օրհնեց կայսր Նիկօլայ II Ալէքսանդրովիչին։

Օրհնութեան հանդէսը վերջանալուց յետոյ, Կաթողիկոսը և հանդէսին բոլոր մասնակցողներն ու հիւրերը հրաւիրվեցին շքեղօրէն զարդարված վրանի ներքոյ, ուր պատրաստված էր ճոխ սեղան հիւրերի համար և առանձին սեղան, բարձրավանդակի վրա, Կաթողիկոսի համար։

Առաջին բաժակը Մատթէոս II Վեհափառ Կաթողիկոսը առաջարկեց կայսր Նիկօլայ Ալէքսանդրովիչի կենացը, ասելով, որ Նորին Մեծութեան սրտին միշտ մօտ է եղել ժողովրդի լուսաւորութեան գործը և նա հաւատացած է, որ Ներսիսեան դպրոցը կը դաստիարակէ պետութեան հաւատարիմ հպատակներ, արժանաւոր քաղաքացիներ և հայ ազգի պիտանի անդամներ։

Կենացը ընդունվեց մեծ ոգևորութեամբ և «կեցցէներով»։

Երկրորդ բաժակը Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսի կենացը և իր ճառի մէջ յայտնեց այն միտքը, թէ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II, հայոց եկեղեցու Պետը, իրան արեց մեծ պատիւ՝ հրաւիրելով դնել հիմնարկութեան երկրորդ քարը, նա մեծ հպարտութեամբ ընդունեց այդ պատիւը, որովհետև Վեհափառի այդ հրաւէրի մէջ տեսաւ մի մեծ գրաւական պետութեան և եկեղեցու լծակցութեան, և համերաշխ, միաբան գործակցութեան լուսաւորութեան ասպարէզում։ Մատթէոս II, իբրև հայոց եկեղեցու Պետ, և ինքն, իբրև ներկայացուցիչ ռուսական կառավարութեան, դնում են առաջին և երկրորդ վէմերը այն շինութեան, որ կոչված է ուսման և կրթութեան ջահ հանդիսանալ։ Ի հարկէ, — ասաց նահանգապետը, — այդ քարերը նման չեն այն քարերին, որ մի դիժ գցում է մի հորի մէջ և 10 խելօք չեն կարողանում հանել, բայց սրանք հիմնաքարեր են այն մեծ կոթողի, որ եկեղեցու և պետութեան ներկայացուցիչների ձեռքով ձգվում է իբրև հիմք կրթարանի, ուստի նա առաջարկում է Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը, Կաթողիկոսի, որի հայեացքները եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների մասին նրան շատ լաւ յայտնի են։

Այս բաժակը նոյնպէս ընդունվեց մեծ ոգևորութեամբ և կեցցէներով։

Երրորդ բաժակը առաջարկեց Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցօվ-Դաշկովի կենացը, որ եղել է հաւատարիմ թարգման և արտայայտիչ Նորին Կայսերական Մեծութեան ցանկութիւնների և հայեացքների։

Նոյն ոգևորութեամբ և կեցցէներով ընդունվեց այս բաժակը։

Հետզհետէ առաջարկվեցին Փոխարքայի օգնական գեներալ Շատիլօվի, Թիֆլիսի նահանգապետի, փոխ-նահանգապետի կենացները։

Ապա Գարեգին արքեպիսկոպոսը համառօտակի զեկուցանելով պատմութիւնը՝ թէ ինչ հանգամանքների և պայմանների մէջ Ալ. Մանթաշեան ընդունեց դպրոցի նոր շինութեան ծախսերն իր վրա առնելու առաջարկը, յայտնելով որ իր համար մեծ բաղդաւորութիւն և պատիւ է համարում կցելու իր անունը Ներսէս Աշտարակեցու անուան հետ, առաջարկեց Մանթաշեանի կենացը, որ մեծ որոտներով ընդունվեց և որին պատասխանեց Առաքել Սարուխանեան, իբրև ներկայացուցիչ Մանթաշեանի, մի քանի շնորհակալական խօսքերով։

Աշոտ եպիսկոպոս Շախեան առաջարկեց խմել Էջմիածնի Աթոռի բարգաւաճման և ծաղկման համար, որ ընդունվեց ուրախութեամբ։

Ապա առաջարկվեցին բաժակներ հոգաբարձութեան, նրա նախագահի և Թիֆլիսի քաղաքագլուխ Չէրքէզօվի ու նրա պաշտօնակատար Խատիսեանի կենացը։ Վերջինս արտասանեց մի սրամիտ ու գեղեցիկ ճառ, ցոյց տալով որ եկեղեցու և պետութեան ներկայացուցիչների միաբան հիմնարկութիւնը կրթութեան մի մեծ տաճարի՝ պէտք է ունենայ մեծ նշանակութիւն համապետական և ժողովրդական տեսակէտից։

Հոգաբարձութեան կողմից կարդացվեց բնագիրը այն հեռագրի, որ նոյն օրը պէտք է ուղղվէր հիմնադիր Ալ. Մանթաշեանին, որով յայտնվում է նրա դպրոցի հիմնարկութիւնը Մատթէոս II-ի օրհնութեամբ և աջակցութեամբ պետութեան ներկայացուցչի։

Վեհափառը, նորից օրհնելով ժողովրդին, մեկնեց նոյն հանդէսով։

Առհասարակ հանդէսը թողեց մխիթարիչ և գեղեցիկ տպաւորութիւն։ Հ. Ա.

—

Վեհափառ Կաթողիկոսը իր կողմից ուղարկեց Ալ. Մանթաշեանին հետևեալ հեռագիրը.

«Այսօր ներկայութեամբ կառավարութեան, հայ հոգևորականութեան ու հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչների և մասնակցութեամբ ժողովրդի ահագին բազմութեան՝ ես առանձին հաճութեամբ դրեցի առաջին քարը Ներսիսեան դպրոցի շինութեան, որի ծախքերը ինքնայօժար խոստացել էք հոգալու ձեր միջոցներով։ Օրհնում եմ ձեր մարդասիրական այս մեծ գործը և մաղթում եմ ձեզ և ձեր ազնիւ գերդաստանին երկար կեանք ու ամեն աջողութիւն։

«Մատթէոս Կաթողիկոս»

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վերջին մի քանի օրերը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայանում են ազգային, եկեղեցական, կրթական զանազան հաստատութիւնների պատգամաւորութիւններ և մասնաւոր անձինք։ Բացի այն հաստատութիւններից, որոնց մասին արդէն յիշված է «Մշակում», ներկայացել են՝ 1) Հայուհեաց Բարեգ. Ընկերութիւնը, 2) Որբախնամ Ընկերութիւնը, 3) Ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը, 4) Թիֆլիսի բոլոր ծխական դպրոցների հոգաբարձութիւնները, 5) Ուսուցչական Միութեան վարչութիւնը, 6) Թիֆլիսի եկեղեցիների ստորին պաշտօնեաները՝ դպիրները և տիրացուները, 7) կոնսիստորիայի պաշտօնեաները, 8) Ախալցխայի հայ հասարակութեան պատգամաւորները, 9) Թեմական խորհրդի անդամները, 10) հայ գրականագէտները, որոնք և մատուցին իրանց ուղերձը, որին անխտիր ստորագրել են գրեթէ բոլոր գրողները։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ներկացաւ Վեհափառին երկու անգամ, յունիսի 16-ին և 19-ին։ Առաջին անգամ ողջոյնի ճառ հոգաբարձութեան կողմից խօսեց Աւ. Սահակեան, յայտնելով այն միտքը, թէ Ներսիսեան դպրոցը, իբրև ազգային մի կուլտուրական հաստատութիւն, պէտք է ընթանայ ժամանակի ոգուն համաձայն, թէ նա պէտք ունի նիւթական և բարոյական վերաշինութեան և որովհետև առաջինն արդէն իրագործվում է շնորհիւ Ա. Մանթաշեանի, երկրորդն ևս, յոյս կայ, կիրագործվի Նորին Վեհափառութեան օրով։ Կաթողիկոսը, շնորհակալութիւն յայտնելով հոգաբարձութեան ողջոյնի համար, մի երկար պատասխանով բացատրեց, թէ ինքն ինչպէս է ըմբռնում Ներսիսեան դպրոցի նշանակութիւնը և ուղղութիւնը։ «Մի մոռնաք, տեարք հոգաբարձուք, — ասաց նա, — որ Ներսիսեան դպրոցը, այո, քաղաքակրթական հաստատութիւն է, բայց ամենէն առաջ հոգևոր դպրոց է և նա հոգևոր սնունդ պիտի ջամբէ հայ մանկտւոյն, ամրացնէ անոր մէջ սէր առ հայոց եկեղեցին, հայ լեզուն, պատմութիւնը և գրականութիւնը»։

—

Գայիանեան դպրոցի հոգաբարձութեան կողմից Նիկ. Տէր-Ղևոնդեան մի մանրամասն բանաւոր զեկուցումն ներկայացրեց այդ դպրոցի հիմնադրութեան պարագաների և նրա խաղացած դերի մասին և խնդրեց Վեհափառին հովանաւոր լինել։ «Ի՞նչպէս կարելի է հովանաւոր չը լինել այդպիսի մի դպրոցի, որ առաջին անգամ ըլլալով ինքն է հայ լեզուն տարածեր օտարախօս Թիֆլիսի մէջ», — պատասխանեց կաթողիկոսը։

—

«Գիւղատնտես» խմբագրական կազմը Վեհի մօտ

Երէկ, ամսիս 20-ին, առ. ժամը 11-ին, Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացաւ «Գիւղատնտես» շաբաթաթերթի խմբագրական կազմը իր աշխատակիցներով և նուիրեց շաբաթաթերթի մինչև օրս լոյս տեսած բոլոր համարները՝ գեղարուեստական կազմի մէջ։ Դիմելով Նորին Վեհափառութեան Ա. Աթանասեան խմբագրութեան կողմից ասաց հետևեալը.

«Ընդառաջ գնալով հայ գիւղացիութեան ժամանակակից գիւղատնտեսական կեանքի պահանջներին, Թիֆլիսում ապրող հայ գիւղատնտեսներս, սրանից վեց ամիս առաջ, հիմք դրեցինք «Գիւղատնտես» շաբաթաթերթի հրատարակութեանը և՝ ժողովելով թերթի շուրջը Կովկասում գործող հայ մասնագէտներին՝ թերթի միջոցով տուեցինք և տալիս ենք երկրագործ ժողովրդին որոշ գործնական ցուցմունքներ վերաբերեալ գիւղատնտեսութեան զանազան ճիւղերին։ Էջմիածինը իր բազմաթիւ կալուածքներով ներկայանում է Կովկասի ամենախոշոր կալուածատէրը և, որպէս այդպիսին, նա պէտք է ունենայ իր ազդեցութիւնը ազգաբնակութեան գիւղատնտեսական կեանքի վրա։ Թէ Եւրոպայում և թէ Ռուսաստանում բարեշէն, կանոնաւորված կալուածքները հանդիսանում են որպէս մէկ-մէկ գործնական դպրոցներ, որոնցից օրինակ է առնում շրջակայ ազգաբնակութիւնը։ Մենք գիւղատնտեսներս կը ցանկայինք, որ գոնէ այսուհետև, Ձեր Վեհափառութեան օրօք, Էջմիածնի կալուածքները իրօք լինէին այդպիսի օրինակելի ագարակներ, որից օգտվել կարողանար հայ գիւղացիութիւնը, և մենք յայտնում ենք մեր պատրաստակամութիւնը թէ գործով և թէ խօսքով օգնել Ձերդ Վեհափառութեանը Ձեր այն ձեռնարկութիւնների մէջ, որոնք ուղղված կը լինեն Էջմիածնապատկան կալուածքների բարեշինութեանը յօգուտ իրան և հայ գիւղացիութեան»։

Նորին Վեհափառութիւնը պատասխանեց. «Իրօք հայ ժողովրդի համար գիւղատնտեսութիւնը ամենագլխաւոր պարապմունքն է, բայց շնորհիւ տգիտութեան՝ հայ գիւղացին տարուան վեց ամիսը միայն կաշխատի, իսկ միւս վեց ամիսը անգործ նստած է տանը։ Կը գովեմ ձեր՝ գիւղատնտեսներուդ՝ սկսած գործը, կօրհնեմ ձեզ և հաւատացած եմ, որ երբ կը պարզուին Էջմիածնի զանազան ձեռնարկութեանց վրա եղած ծախքերը, Էջմիածնի կալուածոց բարեկարգութեանը մեծ մաս կը հանուի։ Ահա այդ ժամանակ ես պէտք պիտի ունենամ հայ գիւղատնտեսներուդ թէ խորհուրդներուն և թէ աջակցութեանը։ Օրհնեալ ըլլաք»։

—

Հինգշաբթի, երեկոյեան $8^{3}/_{4}$ ժամին, պաշտօնապէս (Միջազգային մամուլի դաշնակցութեան նշանով) ներկայացաւ Վեհափառ Կաթողիկոսին Լիսբոնի գրականագէտների, արուեստագէտների և խաղաղասէրների Միջազգային Միայուն Կօմիտէի լիազօր Տիգրան Նազարեան և զեկուցանեց հետևեալը.

«Վեհափառ Տէր.

«Լիսբոնի գրականագէտների, արուեստագէտների և խաղաղասէրների միջազգային միայուն կօմիտէին զեկուցանելով Վեհափառութեանդ կենսագրութիւնը, ստացայ հետևեալ որոշումը՝

«1) Ողջունել անվեհեր գործիչ և մարդասէր Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի հայ-լուսաւորչական XVI-դարեան պատմական գահ բարձրանալը։

«2) Աղերսել խաղաղասէր և արդարութեան հսկայ պաշտպան Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի պատկերը իր յատուկ մակագրութեամբ Լիսբոնի գրականագէտների, արուեստագէտների և խաղաղասէրների միջազգային միայուն կօմիտէին նուիրաբերելու, որը կը պահվի իբրև բարեկամական աւանդ Լիսբոնի ազգային գրադարանում։

«Զեկուցանելով վերոյիշեալները Վեհափառութեանդ, խոնարհաբար հայցում եմ Ձերդ Սրբութեան բարեհաճ տնօրէնութիւնը։

«Խորին ակնածութեամբ համբուրելով Ձերդ Վեհափառութեան ս. աջը՝ Լիսբոնի գրականագէտների, արուեստագէտների և խաղաղասէրների միջազգային միայուն կօմիտէի համայն Ռուսաստանում լիազօր Տիգրան Նազարեան»։

Նորին Վեհափառութիւնը յօժարակամ բարեհաճեց լսել այս զեկուցումը և ընդունեց որոշման թուղթը, յայտնելով իր շնորհակալութիւնը և համաձայնութիւնը։

Ապա ներկայացան տիկ. Հեղինէ Նաւասարդեան և Տիգրան Նազարեան Վեհափառ Կաթողիկոսին գրական-գեղագիտ. սալօնի կողմից. տ. Հեղինէ Նաւասարդեան կարդաց հետևեալ ուղերձը.

«Վեհափառ Տէր.

«Գրական-գեղագիտական սալօնը, որ հաստատված է «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան կից և որի նպատակն է գրականագէտների, արուեստագէտների և լրագրողների մէջ, անկախ նրանց քաղաքական դաւանանքից, մտցնել համերաշխութիւն, ամենաջերմ զգացումներով ողջունում է Վեհափառութեանդ շնորհաբեր գալուստը և անսահման հաճոյքով զեկուցանում Ձերդ Սրբութեան, որ ուրբաթ, յունիսի 19-ին, սալօնի հերթական գրական-երաժշտական երեկոյթը նուիրված է ի պատիւ Վեհափառ Հայրապետիդ, և այսու հայցում է Վեհափառութեանդ թոյլատրել շքախմբիդ շնորհաբերել այս հանդիսին։

«Որդիական ակնածութեամբ համբուրելով Վեհափառութեանդ ս. աջը, անձնուէր սպասաւորներ՝ տեսուչ սալօնի՝ Տ. Նազարեան, ղեկավար երաժշտական մասի Հեղինէ Նաւասարդեան»։

Դրանից յետոյ Տիգրան Նազարեան ներկայացաւ Վեհին և մատուցանեց իր հրատարակած թերթերի մի քանի տարվայ օրինակները և Վեհափառի ճենապակու վրա պատկերը հետևեալ ուղերձով.

«Ազգընտիր, սիրեցեալ Հայրապետ.

«Ժամանակը հանգամանքն ու տարածութիւնը խոչընդոտ եղաւ Երուսաղէմ հասցնելու անվեհեր պատրիարք Իզմիրլեանի՝ ճենապակու վրա Լօնդօնում պատրաստած պատկերը սրբազան կալանաւոր Իզմիրլեանին։

«Անսահման երջանիկ ենք այսօր, որ մատուցանում ենք այդ նուիրական պատկերը Վեհափառ Իզմիրլեան Ամենայն Հայոց ազգընտիր կաթողիկոսին, նրան, որ դեռ Երուսաղէմում կալանաւոր էր, երբ անցեալ տարի յունիս ամսին «Տարազն» առանց տատանվելու հռչակեց Նրան Վեհափառ։

«Թող Աստուած շատ տարիներ պարգևէ Վեհափառ Իզմիրլեանին հայ խաւար մթնոլորտը լուսաւորելու այն հոգով և ուղղութեամբ, որով Ինքը՝ Վեհափառ Իզմիրլեանը մինչև օրս ընթացել է։

«Մեծարանք, որդիական սէր և պատկառանք, վստահութիւն և սիրայօժար անձնուէր սպասաւորութիւն Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետ Տ. Տ. Մատթէոս II Կաթողիկոսին մատուցանում է «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը իր բոլոր աշխատակիցներով։

Այդ բոլոր երեք ուղերձները և ի պատիւ Վեհափառ Կաթողիկոսի գրական-գեղագիտական սալօնում կայանալիք երեկոյթի հրաւիրագիրը մի շքեղ թղթակալի (պօրտ-պապիէ) մէջ մատուցվեց Վեհափառին։ Նորին Սրբութիւնը յայտնեց ի միջի այլոց, որ «Աղբիւր-Տարազ» շարունակ ստանում էր Երուսաղէմում, կարդում, և իրան մեծ սփոփանք էին պատճառում այդ հանդէսները։ Յիշեց Վեհափառը այն օրերը, երբ Ինքը դեռ Կ. Պօլսում պատրիարք՝ առաջին անգամ տեսակցութիւն ունեցաւ Տիգրան Նազարեանի հետ։ Յիշեց թէ ինչպէս նա ստացաւ այն ժամանակ այդ պատկերները նայլն, նայլն։

Այդ ունկնդրութեանը ներկայ էին Վեհափառի ընդունելութեան ընդհանուր կարգադրիչ բժշկապետ Բագրատ Նաւասարդեան և սինօդի անդամ Հ. Բարգէն վարդապետ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 16 յունիսի

Տեղիս Ջուլհականոցի վարչութիւնը ամառային արձակուրդների պատճառով դադարեցրել է իր արհեստանոցի աշխատանքները և իր գործունէութիւնը տեղափոխել գիւղերը. առայժմ, երկու տօրք և մի վարպետուհի իր օգնականով հանդերձ գործում են Գետաշէնում առանձին շէնքի մէջ՝ գեղջկուհիների աշակերտութեամբ։

Թիֆլ. Հայ Տնայն. և Գիւղատ. Ընկ. վարչութիւնը յարգել է տեղիս Ջուլհականոցի վարչութեան խնդիրը և գիւղական գործունէութեան համար յատկացրել է տեղիս արհեստանոցին 150 ր., որը տուացվել է՝ 100 ր. փողով, մի նորաձոյն ձևի տօրքով, և մօտ 25 ր. թելով։

Համկալ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հայոց Դրամատիկական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, որ նշանակված էր ամսիս 19-ին, երեկոյեան ժամը 8-ին Բ. Ընկ. դահլիճում, թէև կայացաւ, բայց ժողովի կողմից նախագահ ընտրված Հ. Առաքելեան առաջարկեց յետաձգել ժողովը և չը քննել օրակարգի հարցերը, ի նկատի ունենալով, որ անդամների թիւը շատ քիչ է։ Ժողովը ընդունեց այս առաջարկութիւնը և որոշեց յետաձգել օրակարգի հարցերի քննութիւնը սեպտեմբերին։ Ընկերութեան Թիֆլիսում ունեցած 70 անդամներից ժողովի էին եկել 10 հոգի։ Նոյն իսկ վարչութեան անդամներից բացակայ էին։ Ընկերութիւնը անցեալ թատրոնական սեզօնին ունեցել է դեֆիցիտ 2898 ր., իսկ նախորդ սեզօններից գոյացած դեֆիցիտի հետ միասին այժմ ունի 8225 ր. դեֆիցիտ։

◆ Մինաս Ջերազ այցելեց Թիֆլիսի Որբախնամ Ընկերութիւնը և շատ գոհ մնաց որբանոցից։ Նա իր գեղեցիկ ճառի մէջ յայտնեց, որ իր սրտին շատ մօտ է առնում որբանոցի գործունէութիւնը, որովհետև ինքն էլ վաղ կորցրել է իր ծնողներին և որբ է մեծացել։ Ցանկանալով աջողութիւն ընկերութեան գործողներին գոհունակ սրտով հեռացել է որբանոցից։

◆ Այսօր երեկոյեան կայանալու է ընթրիք ի պատիւ թիւրքահայոց ազգ. ժողովի ատենապետ Մինաս Ջերազի։ Այս առթիւ մեզ խնդրում են յայտնել, որ ճաշին մասնակցողները երեկ. ժ. 9-ին պէտք է լինեն Վերայի «Ֆանտազիա» այգում։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդի, յունիսի

19-ի կայացած նիստում ընտրվեցին խորհրդի պաշտօնակատար անձինք. նախագահ՝ Ս. Յարութիւնեան, փոխ-նախագահներ՝ Յով. Սպենդիարեան և Սամուէլ Բաղդեան, գանձապահ՝ Առաքել Սարուխանեան և քարտուղար՝ Պետրոս Զաքարեան։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը հրաւիրել է կաթնատնտես Լևոն Աֆրիկեանին ամառվայ ամիսներում շրջելու Նոր-Բայազէտի շրջանի գիւղերը՝ կարդալու դասախօսութիւններ և մեքենաների վրա ցոյց տալու կաթնատնտեսութեան վերաբերեալ գիտելիքներ։

◆ Մօտ օրերս Պետերբուրգից Թիֆլիս է վերադարձել յայտնի հայազգի երգիչ Ամիրջանը։ Պետերբուրգում նա պահում է երաժշտական կուրսեր։ Թիֆլիսում նա մըտադիր է մնալ մինչև առաջիկայ ամսի 5-ը և, ինչպէս լսում ենք, այդ ժամանակամիջոցում նա հաւանօրէն կը տայ մի նուագահանդէս. շատ ցանկալի է, որ տեղական հասարակութիւնը օգուտ քաղէր առիթից տեսնելու իրան լաւ ծանօթ երգչին բեմի վրա և լսելու նրա ձայնը, որ զգալի կերպով փոխվել է. ու զարգացել կոկորդի ծանր վիրահատութիւնից յետոյ։ Յուլիսի 5-ից յետոյ Ամիրջանը ուղևորվելու է Կիսլովոդսկ, ուր հրաւիրված է ամառս երգելու։

◆ Թիֆլիսում մի քանի ժամանակ առաջ հրատարակվող միակ գերմանական շաբաթաթերթը, կարճ ժամանակով դադարելուց յետոյ, վերսկսեց իր հրատարակութիւնը։ Թերթի խմբագիր հրատարակիչ Լէյստը իր վերջին համարում (№ 52) յայտնում է, որ հրատարակութեան իրաւունքը անցնում է Ալէքսանդր Մօզլէրին, ուստի թերթը, կարճատև ընդհատումից յետոյ, կը սկսվի հրատարակել կանոնաւոր կերպով և այն բաժանորդները, որոնք կուղարկեն երկրորդ կիսամեակի բաժանորդագինը, կը ստանան համարները։

◆ Երևանից, երէկ, յունիսի 20-ին, Գարսեվան Աղազադեանից ստացանք հետևեալ հեռագիրը. «Յունիսի 17-ին, քառասնօրեայ բանտարկութիւնից յետոյ, բանտից ազատվեց երդուեալ հաւատարմատար Գրիգոր Տէր-Խաչատրեանը»։

◆ Ինչպէս յայտնի է, կառավարութիւնը արգելեց լօտօ խաղը բոլոր ժողովարաններում և հասարակական տեղերում։ Միևնոյն ժամանակ ժողովարանների աւագների խորհուրդները քանիցս «ռմբակոծեցին» կառավարութեանը իրանց խնդրագրերով, որով, պատճառաբանելով թէ իրանց եկամտի խոշոր աղբիւրը ցամաքեց, խնդրում են թոյլատրել շարունակել խաղը։ Ներկայումս, ինչպէս «Т. Л.»-ն է տեղեկացել, շուտով թոյլատրըրվելու է լօտօն, սակայն որոշ պայմաններով, օրինակ՝ որ լօտօյի համար յատկացվի յատուկ շինութիւն (ժողովարանների ընդհանուր շինութիւններում և ճաշարաններում լօտօն անպայման արգելվում է), որ լօտօյի խաղը տևէ որոշ ժամեր և այլն։

◆ Ժողովրդական կրթութեան մինիստրութիւնը տեղեկացրել է կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, որ սկսած 1909|10 թ. ուսումնական տարուց աւարտական վկայականներ ստանալու նպատակով քննութիւն տուողներից և մի դասարանից միւսը անցնողներից պարտաւորապէս պէտք է պահանջել ֆրանսիական և գերմանական լեզուների գիտութիւն։

◆ Յունիսի 19-ին Թիֆլիսում սկսվեցին հոգևորականութեան համագումարի նիստերը եկեղեցական մի քանի հերթական խնդիրների քննութեան համար։

◆ «Зак.»-ն հաղորդում է, որ այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, յատուկ որոշված կարգով տեղի է ունենալու Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի պատկերի փոխադրութիւնը ռուս հայրենասիրական ընկերութեան դահլիճը նահանգապետի բնակարանից։

◆ Այս տարվայ սեպտեմբերից, կովկասեան գիւղատնտեսների համագումարի ժամանակ, տեղի կունենայ ցեղական թռչունների ցուցահանդէս։ Այս ցուցահանդէսի համար երկրագործութեան դեպարտամենտը յատկացրել է 700 րուբլի և մեդալներ։

◆ Մինչև օրս մսի վրա կնքվող քաղաքային սպանդանոցի նշանը այն անյարմարութիւնն ունէր, որ ներկը իջնում էր։ Այժմ քաղաքային լաբօրատօրիան մի ներկ է գտել, որ զերծ է յիշեալ պակասութիւնից։

◆ Կովկասեան ջերմապահական կայարանին կից արդէն բացվել են մեղուաբուծութեան և ջերմապահութեան դասընթացքներ ամառվայ ընթացքում։ Մեղուաբուծութեան ունկնդիրների թիւը հասնում է 60 հոգու, իսկ ջերմապահութեան մասը ունի մի փոքր քիչ ունկնդիրներ։

◆ Յունիսի 19-ին կալանաւորված են ադմինիստրատիվ կարգով Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորված և առանց թոյլտուութեան Թիֆլիս վերադարձած Մելիք-Հայկազեան, Ելիզավետա Մելկաձէ և Գրիգորի Շաւդեա։ Կալանաւորվածները ենթարկվում են օրինական պատասխանատուութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռոստով Դ./վ., 12 յունիսի

Յօգուտ գէյթունցիների և Ադանայի կարօտեալների մենք հրատարակեցինք մի ժողովածու՝ «Հացի կտոր գէյթունցուն»։ Օրինակի գինը 2 րուբլի է, բայց Նոր-Նախիջևանցիները տալիս են 25 և 10 րուբլի ամեն մի օրինակի համար։ Արդէն մենք ձեռք բերինք հազար րուբլի, որ և փոխադրեցինք այսօր Կ. Պօլիս հայոց պատրիարքին։

Հաւատում եմ, որ թիֆլիսցիները կը հետևեն Նոր-Նախիջևանցիների օրինակին և իրանց լումաները կը շտապեն մեզ հասցնել։ Կարօտը մեծ է և չէ սպասում։ Ուղարկում ենք «Մշակի» խմբագրութեան հարիւր քսանևհինգ օրինակ՝ տարածելու համար։

Գր. Ջալխուշեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

19 յունիսի

ԼՕՆԴՕՆ։ Արտասահ. մամուլի սարքած բանկէտում, ի պատիւ Էդուարդ Թագաւորի և Թագաւոր Կայսրի առաջարկված բաժակներից յետոյ, Եֆրեմովը խօսեց մամուլի նշանակութեան մասին։ Զվէնգինցեվը խօսեց արևմտեան կուլտուրան պահելու Ռուսաստանի պատմական դերի մասին։ Մակսուդովը խօսեց մահմեդականների համամարդկային կուլտուրային հաղորդակից լինելու և այն ծառայութիւնների մասին, որ մամուլը մատուցել է բոլոր երկիրներում սահմանադրութիւն մտցնելու ժամանակ։ Անգլիական ժուռնալիստների միութեան նախագահը խմեց արտասահմանեան մամուլի միութեան բարգաւաճման և ռուս ժուռնալիստ Մեսէլցկու կենացը։ Բանկէտում ներկայ էր կոմս Բէնկէնդօրֆը։

Սըր Գրէյի պարլամենտական քարտուղար Լայէլ համայնքների պալատում մասնաւոր ճաշ տուեց, ուր ներկայ էին Խոմեակով, Գուչկով, կոմս Բօբրինսկի, Միլիւկով, Շիդլովսկի, կոմս Պօտօցկի և Մակլակով, իսկ անգլիացիներից՝ լիբերալ կուսակցութեան ականաւոր անդամները։ Ճառեր չարտասանվեցին։ Մասնաւոր ճաշին մաքերի փոխանակութեան ժամանակ խօսակցութիւն եղաւ ժամանակակից դրութեան մասին։

Յունիսի 18-ին մի հնդիկ ուսանող սպանեց ատրճանակով գնդապետ Վիլեամ Կէրզօն Ուայէլին, որ ծառայում էր Հնդկաստանի գործերի ատեանի մէջ. գնդակը կպաւ նաև Շանխայից եկած բժշկին. ուսանողը ձերբակալվեց։ Նրա մօտ գտնվեցին երկու լիքը ատրճանակ և մի դաշոյն։

ՍՏՕԿՀՕԼՄ։ «Աֆդօնբլադէտը» հաղորդում է արժանահաւատ աղբիւրներից, որ կոմս Ցէպպելինը պատրաստակամութիւն է յայտնել երկու օդապարիկ շինել Շվէդիայի համար։

ՎԻԷՆՆԱ։ Ունգարական պարլամենտը գումարվելու է յունիսի 22-ին մի նիստի՝ սերբ-խօրվատական միութեան անդամների պահանջով՝ պատգամաւոր Նօվօսէլի գործը քննելու համար, որին ենթարկել են երկու շաբաթով բանտարկութեան «հօրչի բանը» բացագանչութեան համար։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Պետերբուրգ գնալիս ճանապարհին Կովկասի Փոխարքան այցելեց Քութայիս և Փօթի, ուր այցելեց այնտեղ զետեղված զօրքերին և զօրատես կատարեց, ընդունեց քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչների պատգամաւորութիւնը, նոյնպէս այցելուներին։ Փօթիից Փոխարքան ճանապարհ ընկաւ «Էրիկլիկ» զրօսանաւով 11 ժամին և ժամանեց Սուխում յունիսի 17-ին, 8 ժամին։ Սուխումի երկու բատալիօն զօրքերի զօրատեսը կատարելուց, հիւանդանոցը և Սուխումի եպիսկոպոսին այցելելուց յետոյ նա շարունակեց իր ճանապարհը։ Ցերեկվայ մօտ 12 ժամին «Էրիկլիկ» զբօսանաւը մտեցաւ Նօվօ-Աֆօնին։ Այցելելով տաճարը և վանքի շատ շինութիւնները տեսնելուց յետոյ, Փոխարքան երեկոյեան 7 ժամին ժամանեց Գագրի, ուր նրան դիմաւորեց պրինց Օլդէնբուրգսկին, որի հետ տեսաւ նոր ստեղծված կուրօրտի բոլոր աչքի ընկնող շինութիւնները։ Նորին Բարձրութեան մօտ ճաշելուց յետոյ Փոխարքան երեկոյեան 11 ժամին ճանապարհ ընկաւ Նօվօրօսիյսկ, ուր ժամանեց յունիսի 18-ին ցերեկվայ 3 ժամին։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Քաղաքը տօնական տրամադրութեան մէջ է։ Ուշ երեկոյեան ժամանեց Կովկասի Փոխարքան և կայարանում դիմաւորեցին նրան շրջանի հրամանատարը և հիմնարկութիւնների ներկայացուցիչները։ Հետևեալ օրը Փոխարքան գնաց զօրքի շտաբը, որտեղից ընգալիաններով գնաց զինուորական տաճարը, ուր դիմաւորեց նրան հոգևորականութիւնը Ագաֆօդօր և Եօան եպիսկոպոսների առաջնորդութեամբ։ Յունիսի 19-ին կոմսը ճանապարհ է ընկնում Պետերբուրգ։

ԱԹԷՆՔ։ Թիւրքական տեղեկութիւնները յունական զինուորութիւնների և կամաւորների զօրաբաժիններ կազմելու մասին այստեղ նորից պաշտօնապէս հերքվում են ամենակտրական կերպով։ Յունաստանը և նրա կառավարութիւնը անպայման խաղաղասէր են տրամադրված։

ԲԵՐԼԻՆ։ Վօլֆի գործակալութեանը հաղորդում են Պարիզից, որ հովանաւոր պետութիւնների պատասխանը թիւրքական յայտագրին երևի եկող շաբաթվայ սկզբին կը յանձնվի Կ. Պօլսում, որովհետև համաձայնութիւնը կատարեալ է չորս կաբինետների միջև այդ հարցի վերաբերմամբ։ Խըմբական յայտագիրը կը պարունակէ յորդոր, ուղղված Աթէնքին և Կանէային՝ պահպանել հանգստութիւնը, նմանապէս և նշանակել ժամանակ միջազգային զօրամասը կղզուց հեռացնելու համար յունիսի 11-ը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դուբրովինը «Рус. Знамя» լրագրի № 134-ում «Ռուսական կեանքի և հրէական արիւնի արժէքը» վերնագրով յօդուածը զետեղելու համար ենթարկվել է 3000 րուբլի տուգանքի։

ՍԱՐԱՏՕՎ։ Խվալինի գաւառի Շախօվսկի գիւղի շրջանում կարկուտը ոչնչացրել է 400 դեսեատին ցանքս։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 21-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Շամքոռեցոց եկեղեցում նշանակված է ծխական ժողով հետևեալ խնդիրների մասին.

ա) Հաշուետւութեան գեկուցումն.

բ) Դպրոցի 1909/10 ուս. տարվայ նախահաշիւը։

Ուստի խնդրում ենք նոյն եկեղեցու յարգելի ծխականներին նշանակված օրը և ժամին շնորհ բերել ժողովին։

Հոգաբարձութիւն

ԱՅԳԻ—ՃԱՇԱՐԱՆ
ԻԺԱՆԷ ԸՆԿ.
Դվօրցօվայա փող., Վ.րաց Ազնւական. ամառային Թատրօնին կից։ Տէլէֆօն № 233.

Այգում ամեն օր նուագում է լարանուագների երաժշտախումբը՝ պ. Պ. Պալիեվի ղեկավարութեամբ, ցերեկ. ժամը 2—4-ը և երեկ. 9—2-ը գիշ.։

ՃԱՇ.—2 տեսակ կերակուր՝ 60 կ., 3 տես.՝ 80 կ., 4 տես.՝ 1 ր.։ Ամեն տեսակ ուտելեղէններ և խմիչքեղէններ համար առանձին պրէյս-կուրանտ։

◆ Գները չափաւոր են ◆
Այգի-ճաշարանի մուտքը ձրի է։

(ա.օ.) 546. 50—11

ՀՕՍՈՐՐԼԻ (ՏՐԻՊՊԼԷՐԻ) ԴԻՄ
Նոր-միջոց—salo
«ՊԻՋԻԼԻՆ»
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատական միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։ Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատև բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացքը։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է դեղատներում։ Մեծաքանակ վաճառքի համար—դեղավաճառանոցային պահեստներում։
(հ. կ.) (П. 88623) 540. 60—4

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ
Գրասենեակ Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ Թիֆլիսում
ЗАВОДСКАЯ МАРКА

Մեր ֆիրմայի հռչակով ՆԱՄԵՆԱԼՈՎ ՕԳՏՎԵԼ՝ մի քանի համանուն և ուրիշ ֆիրմաներ վաճառքի են հանել զտված օղի և այլ խմիչքեղէն մեր էտիկէտներին և ապրանքադրոշմին միանգամայն նմանեցրած էտիկէտներով և ապրանքադրոշմով պ. պ. սպառողներին մոլորեցնելու նպատակով։

Մի քանիսները նոյն իսկ չեն քաշվել էտիկէտների վրա նշանակել խոշոր տառերով Դ. Զ. Սարաջեվ, իսկ մանրատառ, համարեա չը նկատվող մակագրութեամբ՝ ՆԱԽԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ։ Հետևաբար գրասենեակը խնդրում է մեր ապրանքը պահանջելուց ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ դարձնել անուան, հօրանուան և ազգանունի սկզբնատառերի վրա՝ Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ, միայն առանց «ՆԱԽԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ» յաւելուածի, նոյնպէս և գործարանային դրոշմի վրա՝ «ՎԱՅՐԻ ՈԶԽԱՐ ԺԱՅՌԻ ՎՐԱ։

(ե.կ.) 362. 25—17

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ ուրբաթ, յունիսի 26-ին և շաբաթ, յունիսի 27-ին, ցերեկվայ ժամը 12-ին տեղի կունենան ԱԶԱՏ ԱՃՈՒՐԴՆԵՐ՝ վաճառելու համար այն կալուածքները, որոնք մնացել են Ընկերութեանը։
Վաճառվող կալուածքների թւում գտնվում են.
Դ. Գ. Ամիրաղեանինը—V քաղաքամաս, Գեօրգիևսկի հրապար. և Երուսալիմսկայա փողոցի անկիւնում։
Մ. Մ. Կուրխինը—I քաղաքամաս, Մօսկօվսկայա փող. վրա։
Ի. Ս. Վատիտաձէինը—X քաղաքամաս, Անդրէեվսկայա և Բաթումսկայա փողոցների անկիւնում։
Ա. Ֆ. Իվանովինը—IV քաղաքամաս, Բէբուտօվսկայա (Կօջօրսկայա) փողոցի վրա։
Ս. Մ. Ցխօվրէբօվայինը—X քաղաքամաս, Շերեմետիևվսկայա փողոցի վրա։
Ալի Բ. Շէյդայեվինը—X քաղաքամաս, Միխայլօվսկայա և Սագուրամսկայա փողոցների անկիւնում։
Աճուրդի պայմանների մասին տեղեկանալ Վարկային Ընկերութեան Գրասենեակում։
575. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով տեղեկացնում է ի գիտութիւն ամենքի, որ յունիսի 25-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Վարչութեան ներկայութեամբ տեղի կունենայ ԱՃՈՒՐԴ կապալով տալու Դէսիմօնօվսկի հրապարակում (8-դ քաղաքամաս) գտնվող քաղաքային կէտը։ Պայմանների հետ կարելի է ծանօթանալ Վարչութեան գրասենեակում լի օրերը՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը ցերեկվայ։
574. 1—1

ԿՕՆԿՈՒՐՍԱՅԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Լրացրած նոր կատալոգ (№ 26)
Ինժեն. Պ. Կ. ՇՄՈՒԼԵՎԻՉԻ
Լոյս է տեսել յունիսի 15-ին և ուղարկվում է բոլոր ցանկացողներին ՁՐԻ։ Բացառապէս դիմել՝ Въ Контору книгоиздательства: С.-Петербургъ, Ивановская ул., д. № 6. (Телефонъ 236—85).
(17,18,20,21,23) (П. 94571) 557. 5—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

30 յունիսի (13 յուլիսի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից առաջնակարգ „Crimée“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէլ, Բարսէլօնա, Հավր և Լօնդօն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում՝ թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից։
576. 1—1

„ՊՐՕՎՈԴՆԻԿ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՌԻԳԱՅՈՒՄ
1897 թ. 1888
ФАБРИЧ. КЛЕЙМО Т-ВА Р. Р. Ф. ПРОВОДНИКЪ РИГА
Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ Թիֆլիսում
Սոլոլակսկայա փող., № 4.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝
ԼԻՆՈԼԵՈՒՄ մեծ քանակով, միագոյն և նկարներով.
ԱՍԲԵՍՏԻ ԿԱՐՏՈՆ.
ԱՍԲԵՍՏԻ և ՏԱԼԿԻ ՆԱԽՇԵՐ.
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
«ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ» ԼԻՆՈԼԵՈՒՄ միջանցիկ նկարներով, որոնք չեն ձևափոխւում մինչև լինոլեումի վերջնական մաշվելը։
ԼԻՆԿՐՈՒՍՏԱ (ռելիեֆական պաստառներ) ռելիեֆ նկարներով զարմանալի իրանց չքեղութեամբ և մեծ խնայողութեամբ։
ՀԱՏԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ աշխարհի ամենալաւ կրկնակօշիկների ՊՐՕՎՕԴՆԻԿ
(№ 1) 25—18

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.